

13. Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցիին աւանդութիւնները. — Ս. Կուսի մահուան և թաղման պարագաները Աւետարանին մէջ պատմուած չեն, աւանդութիւնն է որ մեզի կը տեղեկացնէ Յիսուսի մօր մահուան եւ թաղման առթիւ տեղի ունեցած յիշատակները: Գեթսեմանիի մէջ կը թաղուի Ս. Կոյսը ու անկէ մարմնով կը վերափոխուի երկինք, ինչպէս կ'ընդունի եկեղեցին: Այս մասին որքան Աւետարանի պատմութիւնը ժըլատ է, նոյնքան առատ են անվաւերական գրուածքներ, որոնք որքան որ նոր ժամանակներու գործ նըկատուին, բայց դարձեալ անոնք հին աւանդութեանց արձագանգները կրնան համարուիլ: Նոր Կտակարանի ինչ ինչ մասերը մեզ կը համոզեն թէ Ս. Կոյսը ծերացած տարիքին մէջ Երուսաղէմ մեռած է և թաղուած Գեթսեմանիի մէջ եւ վերափոխուած է իր գերեզմանէն, որուն վրայ շատ կանուխէն եկեղեցի մը շինուած է: Ձեռագիրներուն մէջ կը գտնուի անվաւեր գրութիւն մը Թողոք Դիոնեսիոսի Արխապագացոյ առաջին եպիսկոպոսի Արեւացոց ֆաղափն, զոր գրեաց ևս պատասխանի Թղրոյն Տիսուսի եպիսկոպոսի Կրեւացոց, յաղագս ևնջնակ Սրբոյ Ասուածածնի և կուսի խորագրով. այս գրուածքը թանկագին յիշատակարան մըն է որ կը գտնուի միայն Հայ մատենագրութեան մէջ և կատարելապէս կը հաստատէ Երուսաղէմի աւանդութիւնը: Անիկա հիմը եղած է Մովսէս Խորենացիի անունով մեզ հասած «Պատասխանի թղթոյն Սահակայ» անվաւեր գրութեան՝ որ Ս. Կուսի փոխման վաղնջական աւանդութեան վրայ խմբագրողը աւելցուցած է Բարթողիմէոս առաքելոյն շնորհուած Ս. Կուսի պատկերին պարագան:

Ննջումն Ս. Կուսի. — Մատենագրութեան մէջ